

Ժողովուրդ

170
(3020)

5 դեկտեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

Վ. ԱՂԱԶԱՐՅԱՆԻ ԵՅԱՐԴԵՐԸ ՏԵՂԻ ՏՎԵՑԻՆ. ԴԻՄՈՒՄ՝ ԱԺ ԵՄԵՆԱԳԱՐԻՆ



«Ժողովուրդ» օրաթերթի կողմից բացահայտված մանր եղջերավորներին առնչվող կոռուպցիոն սկանդալը չի ներում Հոլիկ Աղազարյանը. քնն է պահում, մերժում հարցազրույցներ տալ մեզ, իսկ երեկ էլի վիրավորեց մեր լրագրողին:

ԱԺ-ում հավատարմագրված լրագրող Քրիստինա Մուշեղյանը, բարեխղճորեն կատարելով իր մասնագիտական պարտականությունները, մոտեցել է ԱԺ-ում Հոլիկ Աղազարյանին, որը կոպիտ կերպով հարձակվել է, վիրավորել լրագրողին, որին ակնատես են եղել ՔՊ խմբակցության մի խումբ պատգամավորներ: Չտարածելու համար կուսակցությունից հեռացված ու մերժված Աղազարյանի խոսքերը՝ միայն տեղեկացնենք, որ այս միջադեպից հետո ԱԺ միջանցքում մեր լրագրողին եւ օպերատորին է մոտեցել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը եւ հետաքրքրվել՝ «Ձեզ է վիրավորել Հոլիկ Աղազարյանը: Գուխը պատին է տվել, դիմում գրե՞ք մեր ֆրակցիա, կպատժենք»:

Իհարկե, վստահ ենք, որ եթե Աղազարյանը հեռացված չլիներ կուսակցությունից, Ալեն Սիմոնյանը նման պատրաստակամ առաջարկով մեզ չէր մոտենա, եւ ՔՊ-ական պատգամավորը կմնար անպատիժ:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 15-ին Նույն Հոլիկ Աղազարյանը վիրավորել էր նաեւ մեր մյուս լրագրողին՝ Քնար Մանուկյանին, բայց ՔՊ-ականները որեւէ կերպ չդատապարտեցին, իսկ Ալեն Սիմոնյանն էլ չմոտեցավ ու չասաց՝ գլուխը պատին է տվել: Ավելին՝ անգամ «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողին ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը զրկեց հավատարմագրից՝ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանին վերջինիս համար անցանկալի՝ թմրանյութեր օգտագործելուն առնչվող հարցեր տալու համար: Նույն Ալեն Սիմոնյանը այս դեպքում Նույնպիսի հոգատարություն չդրսեւորեց: Բայց հիմա ՔՊ-ականները վճռակատար են ամեն կերպ ցանկանում են պատժել Աղազարյանին:

← **Գ. Աղազարյանին պատժելու վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթի դիմումն արդեն ԱԺ նախագահի սեղանին է մեկնել, ինչպես միշտ, մեր իրավունքների համար պայքարի բոլոր գործիքներից օգտվում ենք:**

Պետական բարձրաստիճան պաշտոնները լրացվում են ՀՀ դատախազության կադրերով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի թեկնածուներից մեկը գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հրահանգով պաշտոնից ազատված դատախազ է: Ինչպես հայտնի է, երկու թեկնածու կա սահմանադրական այդ կարգավիճակում անկախ մարմնի անդամի համար: Արմեն Մարուխյանի եւ Նարինե Աղազարյանի թեկնածությունները մրցութային խորհրդի որոշման հիման վրա առաջարկվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում: Իսկ ովքեր են նրանք. ամենեին՝ ոչ պատահական մարդիկ: Այս տարվա մայիսի 3-ին Ազգային ժողովի Պետաիրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստում, երբ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը տարեկան հաշվետվություն էր ներկայացնում, պատգամավոր Արծվիկ Մինասյանը հարց բարձրացրեց Արմեն Աշոտյանի գործով, դատախազը պատասխանեց, որ Արմեն Աշոտյանի վերաբերյալ քրեական գործով «պետությանը պատճառվել է 905.194.706 դրամի գույքային վնաս: Մեղադրյալի կողմից պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնվել է»: Մինչդեռ Աշոտյանի փաստաբանները հայտարարեցին, որ դա զրպարտություն է, որ դատարանի 16.04.2024թ. որոշմամբ հաստատվել է, որ այս գործով պետությանը որեւէ վնաս չի պատճառվել, ոչ Արմեն Աշոտյանը եւ ոչ էլ որեւէ այլ մեղադրյալ որեւէ «վնաս» չեն «վերականգնել», որովհետեւ պաշտպանող կողմը գործը համարում է շինծու եւ չի ընդունում մեղադրանքը: ArmLur.am-ը բացահայտեց, որ այս բարձրաստիճաններից հետո Աննա Վարդապետյանը, վերադառնալով աշխատանքի, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական եւ իրավական ապահովման վարչության պետ Արմեն Մարուխյանին հրահանգել էր ազատման դիմում գրել ու հեռանալ: Եվ հիմա այդ պաշտոնյալ՝ Արմեն Մարուխյանը, ցանկանում է գնալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:



ՔՊ-ում երեկ իսկական «արմագեղոն» էր: Իշխանական «շարքային» պատգամավորները ապշած ու միեւնոյն ժամանակ վախեցած այս ու այն կողմ էին շրջում, չգիտեին՝ ինչ վարքագիծ դրսեւորեն. չէին խոսում, լուռ դիտորդ էին: Նախ՝ ՔՊ-ական պատգամավորներն անակնկալի էին եկել, որ Նիկոլ Փաշինյանը, այդպես ստորագնելով, խայտառակելով հեռացրեց Հոլիկ Աղազարյանին, ԱԺ ամբիոնից էլ սպառնաց, որ ամեն ինչ արվելու է պատգամավորին մանդատից զրկելու համար: ՔՊ վերնախավի 3 ներկայացուցիչներ՝ Ալեն Սիմոնյանը, Հայկ Կոնջոբյանը եւ Արթուր Հովհաննիսյանը, իրար հերթ չտալով, խոսում էին, թե շոկի մեջ են Աղազարյանի մասին բացահայտումներից, ամաչել են, թե ինչքան են կարողացել, ինչ է գրել Աղազարյանը սոցցանցում իր քննադատներին: Այս պաշտոնյաները մոռացել են, կամ գուցե նրանց «հրահանգվել» է մոռանալ, որ Աղազարյանը կանանց հասցեին էր հայիոյանքներ գրել ու ստել, թե հեռախոսի գաղտնաբառը կտրել էր ու իր անունից գրել: «Ժողովուրդ» օրաթերթը այս մասին գրել էր, նաեւ հիշեցրել, որ Նույն Աղազարյանը հայիոյեց Եռաբլուրում զոհվածների հարազատներին ու, բոլոր դեպքերում, մնաց անպատիժ:



Ներքին գործերի նախարարի նոր տեղակալ Արմեն Մկրտչյանը 3 բնակարան է հայտարարագրել: Նիկոլ Փաշինյանի կադրային ջարդը ներքին գործերի նախարարությունում փորձում է վերականգնել նոր նախարար Արփինե Սարգսյանը: Արմեն Մկրտչյանը համակարգում նոր չէ: Մինչ ՆԳ նախարարի տեղակալ դառնալը Մկրտչյանը զբաղեցրել է ՆԳՆ Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման եւ մոնիթորինգի վարչության պետի պաշտոնը: Մինչ այդ եղել է ՆԳՆ ոստիկանության շտաբի պետը եւ 2023 թվականի անշարժ գույքի, եկամտների, շահերի եւ ծախսերի հայտարարագիր ներկայացրել է ոստիկանության շտաբի պետի պաշտոնեական պարտականությունների դրությամբ: Համաձայն 2023 թվականի հայտարարագրի՝ Մկրտչյանը տարեկան ռեզիդենտ է 4 անշարժ գույք՝ 2 բնակարան բազմաբնակարան շենքում, 1 հողամաս եւ 1 ավտոկայանատեղի: Արմեն Մկրտչյանը հայտարարագրել է եւս 1 բնակարան, որը սեփականության իրավունքով իրեն չի պատկանում, սակայն 90 օրից ավելի շահագործվում է իր կողմից: Այժմ ՆԳ նախարարի տեղակալը ունի մեկ տրանսպորտային միջոց՝ 2021 թվականին ձեռք բերված 2012 թվականի արտադրության Hyundai մակնիշի մեքենա: Պաշտոնը դադարեցնելու պահին Արմեն Մկրտչյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 570 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 2 մլն դրամ: Համեմատելով 2022 թվականին Մկրտչյանի ներկայացրած հայտարարագրի ֆինանսական տվյալները 2023 թվականին ներկայացրած ֆինանսների հետ՝ կարող ենք ասել, որ մեկ տարում դրանք զգալիորեն ավելացել են:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են հողամասերի ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքները:

Սարիբեկ Սեդրակյան (59 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու կամ մի քանի անձանց մոտ սեփականության, օգտագործման ներքո գտնվող հողամասը նրանց է պատկանում համապատասխանաբար՝ ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքով:

Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքը ծագում է երկու կամ մի քանի անձանց սեփականության իրավունքով այն հողամասն անցնելիս, որը չի կարող բաժանվել առանց դրա նպատակային նշանակության փոփոխման կամ օրենքի ուժով ենթակա չէ բաժանման, ինչպես նաև սեփականատերերի կողմից իրենց պատկանող հողամասերը կամովին՝ պայմանագրի հիման վրա մեկ հողամասում միավորելիս:

Օրենքներով եւ այլ իրավական ակտերով, հողաշինարարական եւ քաղաքաշինական փաստաթղթերով սահմանվում են հողամասերի նվազագույն չափերը, որոնցից ցածր չի թույլատրվում ընդհանուր սեփականությունից առանձնացնել հողամասեր (ըստ օրենքի՝ անբաժանելի հողամասեր):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Սեփականատերերից մեկին պատկանող շենքի, շինության վերակառուցումը չի հանգեցնում ընդհանուր հողամասում նրա բաժնի մեծացմանը՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության:

Էջը՝ ԱՆԿԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են ամուսնության մեջ չզգնվող անչափահաս ծնողների իրավունքները:

Նելլի Սաղաթեյան 19 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու եւ նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ:

Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում, ինչպես նաև նրանց մայրությունը եւ (կամ) հայրությունը որոշելիս ծնողները ամուսնության տարիքը լրանալուց հետո կարող են ինքնուրույն իրականացնել ծնողական իրավունքները:

Մինչև անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Երեխայի խնամակալի եւ անչափահաս ծնողների միջև առաջացած տարաձայնությունները կարգավորում է խնամակալության եւ հոգաբարձության մարմինը:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը եւ մայրությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Հայաստանի ֆուտբոլի առաջնության 10-րդ տուրից հետաձգված «Նոա»-«Արարատ-Արմենիա» հանդիպումը երեկ՝ երեկոյան, ավարտվեց Հայաստանի փոխչեմպիոնի հաղթանակով:
«Հանրապետական» մարզադաշտում կայացած խաղը ձգվեց մոտ 100 րոպե: «Նոա»-ին հաջողվեց առավելության հասնել 2:1 հաշվով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայկուստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ:**

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդախտաբար ձեր բարձրագույն բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	-5 - 9 -1 + 2	Արարատ	0 - 4 +6 + 8
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 + 1	Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5	Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1	Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Լոռի	-4 - 8 +1 + 4	Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Տավուշ	0 - 4 +3 + 6	Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2	ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 4 + 4 + 7	Երեւան	0 - 2 + 2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
 «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 22^ա/3, հեռ՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 4.12.2024
 Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
 խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող է կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: